ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Հասմիկ Պետրոսյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև հուլիսի 19-ը ներառյալ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են գենդերային անհավասարության մակրոտնտեսական հետևանքները: Ներկայացել են քաղաքականության միջոցառումների ակնարկը, որոնք կօգնեն կանանց հզորացնել: Դասընթացում քննարկվել է ժամանակի ընթացքում և տարբեր երկրներում գենդերային անհավասարության միտումները, ներառյալ COVID-19 համաճարակի ազդեցությունը. ընդգծվել է գենդերային բացերի փակման կարևորությունը ներառական և կայուն աճի համար: Ինչպես նաև վերլուծվել է գենդերային քաղաքականության տարբերակները հարկաբյուջետային, աշխատանքային, ֆինանսական և իրավական ոլորտներում, որոնք կօգնեն լուծել գենդերային անհավասարությունը:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ համապարփակ բնույթ և ընդգրկում էր մակրոնտեսական վերլուծությունների և դրանց հիման վրա քաղաքականությունների մշակման առանձնահատկությունների համակողմանի ընդհանրական նկարագրեր՝ արժևորելով վերջիններիս կիրառական նշանակությունը:

5. Քննարկված թեմաները՝

1. Գենդերային անհավասարություն՝ չափեր և միտումներ
2. Գենդերային անհավասարություն և մակրոտնտեսական արդյունքներ
3. Գենդերային անհավասարություն. դրդապատճառներ և քաղաքականության տարբերակներ
4. Սեռ, լավ աշխատանք և չվարձատրվող աշխատանք
5. Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը գենդերային անհավասարության վրա
6. Գենդերային անհավասարություն և ֆինանսների հասանելիություն
7. Գենդերային անհավասարություն և իրավական բարեփոխումներ
8. Գենդերային բյուջե

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների գործնական կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ, Իրանի Իսլամական Հանրապետության գենդերային անհավասարության վերաբերյալ մշակվել և ներկայացվել է շնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

X

24 հուլիս, 2024թ.